

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
Музей-институт геноцида армян

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԱՄԻ  
ԲՐՈՒՏՅԱՆ

МАРГАРИТА АРАМОВНА  
БРУТЯН

Երևան 2000 Երևան



016 : 2929 [Armenian text]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
Музей-институт геноцида армян


ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԻՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ  
Նյութեր  
Կենսամատենագրության

A  
20054

2  
АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ УЧЕНЫЕ  
Материалы к библиографии

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԱՄՄ ԲՐՈՒՏՅԱՆ  
МАРГАРИТА АРАМОВНА БРУТЯН

Երևան 2000 Երևան



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց  
ցեղասպանության քանգարան-ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ  
Печатается по решению ученого  
совета Музея-института геноцида  
армян

Պատասխանատու խմբագիր՝ Լ.Ա.Բարսեղյան  
Ответственный редактор: Լ.А.Барсегян

Հեղինակ՝ ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ  
Автор: АНАИТ КИРАКОСЯН

Գրախառներ՝ պրոֆ. Ա.Ա.Փահլևանյան  
պրոֆ. Ժ.Պ.Չուրարյան  
Рецензенты: проф. А.А. Пахлеванян  
проф. Ж.П. Зурабян

**ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԱՄԻ ԲՐՈՒՏՅԱՆԻ**  
**Կյանքի և գործունեության հիմնական սարքավերը**

Մարգարիտա (Մարգո) Արամի Բրտայանը ծնվել է 1922 թ. մայիսի 23-ին Ալեքսանդրապոլում (Լենինական, այժմ՝ Գյումրի) :

Սկզբնական երաժշտական կրթությունը ստացել է Լենինականում, 1934-ից՝ շարունակել Երևանի թիվ 1 երաժշտական դպրոցում (այժմ՝ Ալ. Սպենդիարյանի անվան) :

1938-41 թթ. սովորել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում :

1946-ին ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատմա-անասկան ֆակուլտետը (գիտական ղեկավար՝ Ս.Վ. Կոպաև) :

1951 թ. ավարտել է Երևանի ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի սուպլիանտուրան (գիտական ղեկավար՝ պրոֆ. Զ.Ս. Բուշնուրյան) :

1955-ին շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ :

1956-ից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է :

1938-50 թթ. աշխատել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի անասկան առարկաների դասատու, ապա՝ բաժնի վարիչ) :

1946-51 թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի երաժշտական խմբագիրը և ծրագրային բաժնի վարիչը : Կազմակերպել է հանրապետության առաջին երաժշտական լեկտորիատը :

1960-ականներին ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր : 1968-72 թթ. ընտրվել է Ժողովրդական, ապա Գերագույն դատարանի ատենակալ :

1946-ից դասավանդում է կոնսերվատորիայում՝ երաժշտական տեսական առարկաներ :

1960-75 թթ. հանդիսացել է Հայաստանի Գիտելիք ընկերության քաղաքային բաժանմունքի արվեստի սեկցիայի նախագահ :

1969 թ. կոնսերվատորիայում հիմնադրել է Ժողովրդական երաժշտական ստեղծագործության Կարիճեա, որի գիտական ղեկավարն էր մինչև 1992թ. :

1972-ից գլխավորել է Հայաստանի կոմպոզիտորների միության նորաստեղծ ֆուլկլորային հանձնաժողովը, միևնույն ժամանակ հանդիսացել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության ֆուլկլորային հանձնաժողովի բյուրոյի անդամ:

1977-81 թթ. աշխատել է որպես կոմերսիալային վոկալ-տեսական միացյալ ֆակուլտետի ղեկան:

1981-ին եղել է ԽՍՀՄ Մշակույթի նախարարության արվեստարանության բնագավառում գիտական ուսումնասիրությունների կոորդինացիոն խորհրդի անդամ:

1982 թ. շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

1988-92 թթ. ղեկավարել է կոմերսիալային Հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնը: Այժմ ամբիոնի պրոֆեսոր է և գիտական խորհրդատուն:

1995-ից կոմերսիալային բարձրագույն սրահավորման հանձնաժողովի երկու փորձագետներից մեկն է:

1996-ից հանդիսանում է ԱՕԿՄ-ի երաժշտական սեկցիայի նախագահ, այնուհետև Հայաստան-Լիբանան ընկերության անդամ:

#### Основные даты жизни и деятельности МАРГАРИТ АРАМОВНЫ БРУТЯН

Маргарит (Марго) Арамовна Брутян родилась 23 мая 1922 года в Александрополе (Ленинакан, ныне Гюмри).

Начальное музыкальное образование получила в Ленинакане, а с 1934 года в Ереванской музыкальной школе N 1 (ныне имени А. Спендиаряна).

В 1938-41 гг. училась в музыкальном училище им. Р. Меликяна г. Еревана.

1946 г. окончила историко-теоретический факультет Ереванской госконсерватории им. Комитаса (научный руководитель С. В. Коптев).

В 1951 г. окончила аспирантуру Института искусств АН Арм. ССР (научный руководитель проф. Х.С. Кушнарян).

В 1955 г. присвоена ученая степень кандидата искусствоведения.

С 1956 г. член Союза композиторов Армении.

В 1938-50 гг. работала в муз. училище им. Р.Меликяна в качестве преподавателя теоретических дисциплин, далее заведующим отделением.

В 1946-51 гг. была музыкальным редактором и заведующим отделом программ Армгосфилармонии. Организовала первый музыкальный лекториум в республике.

В 1960-их годах была избрана депутатом Ергорсовета.

1968-72 гг. была избрана народным заседателем Народного, далее Верховного суда.

С 1946 г. преподает музыкально-теоретические дисциплины в Ергосконсерватории.

В 1960-75 гг. была председателем секции искусства городского общества "Гителик" ("Знание").

В 1969 г. основала в консерватории Кабинет армянского народного музыкального творчества, научным руководителем которого была до 1992 г.

С 1972 г. была председателем фольклорной комиссии СК Армении и членом бюро фольклорной комиссии СК СССР.

В 1977-81 гг. была деканом объединенного вокально-теоретического факультета Ергосконсерватории.

В 1981 г. являлась членом совета по координации научных исследований в области искусствознания Министерства культуры СССР.

В 1982 г. присвоена научное звание профессора.

В 1989-92 гг. была заведующей кафедрой армянской музыкальной фольклористики Ергосконсерватории. Ныне профессор и научный консультант кафедры.

С 1995 г. одна из двух экспертов высшей аттестационной комиссии Ергосконсерватории им. Комитаса.

С 1996 г. председатель музыкальной секции АОКС-а, далее член общества Армения-Ливан.

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
Ա Կ Ն Ա Ր Կ

“Հավատարիմ մնացեք և պստիպաներ  
ձեր ակունքները, հավատացեք ժողովրդի  
հիշողությանը, իմացությանը, իմաստնությանը,,

ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ

Այս մաղթանքով ու խորհրդով գիտնական, երաժշտագետ-  
ֆոլկլորագետ, մանկավարժ, հասարակական գործիչ, մեծ եռան-  
դի տեր արվեստագետ Մարգարիտ Բրուտյանը դիմում է հայ  
արվեստագետներին, մտավորականներին, կրիտասարդությանը:

Իր արտահայտությամբ՝ «Թեպետ 20-րդ դարը մարդկության  
համար եղավ խելագար պատերազմների, կոտորածների, տեղա-  
հանությունների, բնության արհավիրքների դար, այնուամենայ-  
նիվ, ես ինձ համարում եմ քախտավոր աստղի տակ ծնված՝ իմ  
ապրած բոլոր ողբերգություններով հանդերձ»:

Ծնվել է 1922 թ. մայիսի 23-ին, Ալեքսանդրապոլում (Լենինա-  
կան, ներկայումս՝ Գյումրի), գինվորական սպայի ընտանիքում:  
Նախնիները պատմական Հայաստանի Մուշ-Տարոն գավառից  
էին, որոնք 1827 թ. տեղափոխվել են Մարալիկ, այնտեղ հիմնա-  
դրել Դաշդալա (այժմ՝ Քարաբերդ) գյուղը:

Ծննդավայր Ալեքսանդրապոլ-Լենինականը՝ հարուստ երա-  
ժրշտական ավանդույթներ ունեցող այդ երբևմնի մշակութային  
կենտրոնը մտավորականների, արվեստագետների, բանաստեղ-  
ծների, աշուղների փայլուն սերունդներ է տվել: Իրավամբ, այդ  
շարքում է նաև Մ.Բրուտյանի պապը՝ երաժիշտ բանահավաք,  
տեսաբան, խմբավար, նկարիչ, մանկավարժ և երաժտահասա-

րակական գործիչ Արշակ Բրուտյանը,<sup>1</sup> որից ժառանգած հասկանիչները հետագայում ցայտուն դրսևորվում են արվեստագետ բռնուռնու ողջ գործունեության մեջ:

Մինչ այդ, Մ. Բրուտյանն անցավ ուսումնառության լուրջ ճանապարհ, սկսելով այն հայրենի քաղաքում, շարունակելով Երևվանում, ապա Լենինգրադում՝ հաղթահարելով կրթական և ստեղծագործական կյանքի աստիճանական փուլերը:

Նախնական կրթությունը նա ստացել է Լենինականի երաժրշտական դպրոցում, սովորելով Նինա Գյանջումյանի դաշնամուրային դասարանում:

1934 թ. Բրուտյանների ընտանիքը տեղափոխվեց Երևան: Երաժշտական կրթությունը նա շարունակեց մայրաքաղաքի այն ժամանակվա միակ՝ այսօր Ալ. Մպենդիարյանի անունը կրող երաժշտական դպրոցում: Սովորեց ճանաչված մանկավարժ Եվգենյա Խանկալամյանի դաշնամուրային դասարանում: Ե. Խանկալամյանը թավական խստապահանջ էր և, երբեմն, խիստ հակասական իր վերաբերմունքի ու կարծիքների մեջ՝ տարակուսանք առաջացնելով աշակերտի մոտ. շարունակել, թե՞ թողնել երաժշտությունը:

Թեև, փխրուն հոգի ունեցող աղջնակի համար սա լուրջ պատճառ էր, երբ միջնակարգն ավարտելուց հետո որոշեց ու-

---

<sup>1</sup> Արշակ Բրուտյան (1864-1936): Կոմիտասի ժամանակակիցն ու սոցալին մշակույթի նվիրյալներից: Նրա կողմից գրառած ժողովրդական և աշուղական երգերի հավաքածուն մեծ արժեք է ներկայացնում (հատկապես՝ Ջիվանուց գրառած մեղեդիները): «Մեամկական մրմունչներ» խորագրով այդ երգերի բնագրերը հրատարակվել են չորս անգամ: Հեղինակ է «Հայկական եկեղեցական ժայնագրություն» դասագրքի (1890, Վաղարշապատ) և «Զաղաքավարության» կանոնավոր կյանքի ուղեցույց» գրքի: Նկարել է դիմանկարներ և սրբապատկերներ հայկական և հունական եկեղեցիների համար: Ստեղծել և ղեկավարել է դպրոցական և եկեղեցական երգչախմբեր:

սումը շարունակել Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրաքիմիական նորարաց ֆակուլտետում: Բարերախոհաբար, երևր ամիս հետո Սամսոն Գասպարյանի<sup>2</sup> պնդմամբ նա բողեց ինստիտուտար և ընդունվեց Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը: Ուսմանը զուգահեռ Մ. Բրուտյանը աշխատում և նաև ուսումնարանում որպես սոլֆեջիոյի, հարմոնիայի և պոլիֆոնիայի դասատու, ինչպես նաև նվագակցող՝ Ա. Տեր-Հովհաննիսյանի (խմբավարությոն), Կ. Դոմբակի (ջութակ), Կ. Լսիզանովի (թավջութակ), Ե. Բրադովսկու (կոնտրաբաս), Վ. Արծրունու (վոկալ) դասարաններում, երբևնն նվագակցելով եղբորը՝ Լևոն Բրուտյանին<sup>3</sup> Լ. Մուրաֆյանի (կլարնետ) դասարանում:

Այսպես, ուղղակիորեն շփվելով այս մասնագետների հետ, նա անուղղակիորեն սովորեց ու օգտավետ դասեր առավ բոլորից: „Մի դասարանում աշխատում էի, իսկ մյուսում՝ կրթությոն ստանում,- հիշում է Մ. Բրուտյանը,- ստիպված էի՝ ժամանակներն էին այդպիսին, հայրիկին ձերբակալելուց հետո ընտանիքի հոգսն ընկավ իմ ուսերին,„:

Այսպես երաժշտագետի համար բոլորովին այլ միջավայր դարձավ Երևանի պետական կոնսերվատորիան: Հարգալից և բարյացակամ վերաբերմունքի մթնոլորտում ևր կրթվում ժամանակի սերունդը, որը հետագայում կողք-կողքի գործելու էր բազմավաստակ պրոֆեսորներ Կ. Ս. Սարաջևի, Գ. Ե. Բուդաղյանի,

<sup>2</sup> Մ. Բրուտյանի հայրը՝ Արամ Բրուտյանը 1937 թ. ամենը զոհերից եղավ, և այդ տարիներին 15- ամյա աղջնակին հայրական հոգաօտարությամբ շրջապստում մարդկանց թվում էր երաժշտագետ Սամսոն Գասպարյանը (1937-40 թթ. կոնսերվատորիայի դիրեկտոր):

<sup>3</sup> Լևոն Արամի Բրուտյան (ծն. 1927 թ.): Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, բազմուպաստակ մանկավարժ: Ավարտել է Լենինգրադի կոնսերվատորայի փողային բաժինը՝ Վ. Ի. Գենսլերի դասարանում (կլարնետ):

Գ. Գ. Տիգրանովի, Տ. Գ. Տեր-Մարտիրոսյանի, Վ. Գ. Տայանի, Ս. Վ. Կոպտևի, Ռ. Խ. Անդրեասյանի Ա. Ա. Ադամյանի, Հ. Գյուլի-բյախյանի և այլոց հետ:

Կոնսերվատորիայում Մ. Բրուսյանն ընտրեց «երաժշտագի-տություն» մասնագիտությունը, սկզբում իբրև պատմաբան՝ Ջ. Տ. Վարդանյանի, հետագայում՝ Ս.Վ.Կոպտևի տեսության դասա-րանում: Այդ ժամանակից մինչև իր կյանքի վերջը Ս. Վ. Կոպտևը մնաց որպես նրա լավագույն բարեկամներից մեկը: Ջերմությամբ հիշելով բոլոր ուսուցիչներին, երաժշտագետ Բրուսյանն իր ձևավորման մեջ տեսնում է նաև այլոց անուղղակի ազդեցությու-նը. «Կ. Ս.Սարաջևը չի դասավանդել ինձ, բայց շփումը նրա հետ, նույն շրջապատում ու մթնոլորտում լինելն իսկ արդեն դպրոց էր»:

1946 թ. ավարտելով կոնսերվատորիան, նա պրոֆ. Մ. Բուշ-նարյանի խորհրդով ընդունվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա ղեկավարը Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր Բ. Ս. Բուշնարյանն էր, որի գիտական խորհրդատվությունն ստանալու համար նա ժամանակ առ ժամանակ մեկնում էր Լենինգրադ:

Մարգարիտ Բրուսյանի կյանքում նշանակալի երևույթ դար-ձավ շփումը Բրիտանացի Բուշնարյանի հետ: Սա նշանակում էր՝ շփում լենինգրադյան մտավորականության, կոնսերվատորիայի դասախոսական կազմի և ընդհանրապես երաժշտական հասա-րակայնության հետ: Բուշնարյանի դասարանում հստակեցվեց Բրուսյան երաժշտագետի մասնագիտական ուղղվածությունը՝ դեպի ազգայինը, դեպի հայ ժողովրդական երաժշտական ստեղ-ծագործությունը:

«Բ.Ս.Բուշնարյանը ինձ առաջարկեց իբրև մասնագիտություն ընտրել երաժշտական ֆոլկլորը, այն հիմնավորեց Հայաստանում մասնագետների պահանջով և ապա, որ Արշակ Բրուսյանի թող-

նուիին եմ՝ «քիչ քև շատ պապիկդ մեջդ նստած կլինի»։ Այսօր երախտապարտ եմ ուսուցչիս ու շնորհակալության խոսքեր եմ ուղղում նրա հասցեին իր այդ առաջարկի համար, որովհետև գործունեության նման հետաքրքիր, հարուստ և շնորհակալ բնագավառ, ինչպիսին հայ երաժշտական ֆոլկլորն է, հազիվ քե այն ժամանակ ես ինքնուրույն ընտրեի իբրև մասնագիտություն» - իր հուշերում գրում է Մ. Բրուսյանը։

Հետագայում երախտապարտ սանուիին իր սիրելի ուսուցչի պայծառ եիշատակը հավերժացնող երկու մեծ գործ ձեռնարկեց։ Առաջինը՝ «Քրիստավոր Քուշնարյան» ժողովածուի կազմումն ու խմբագրումն է<sup>4</sup>։

Ժողովածուն ընդգրկում է խորհրդային մշակույթի անվանի գործիչ, պրոֆ. Բ. Ս. Քուշնարյանի՝ երաժշտագիտական տարրեր պրոբլեմների նվիրված հիմնական հոդվածներն ու ուսումնասիրությունները, գործընկերների ու սաների հուշերը, կարծիքները (Մ. Բրուսյանի հուշերը կրում են «Իմ ուսուցիչը և հոգևոր հայրը» խորագիրը)։ Յավոք, պատրաստի ժողովածուն «Անահիտ» հրատարակչության կնիքը վրան (1990) մնաց անտիպ, այն դեպքում, երբ հնարավորություն էր տրվում առաջին անգամ հայերեն լեզվով ընթերցողին ներկայացնելու վաստակաշատ գիտնականի, մանկավարժի և կոմպոզիտորի ողջ գործունեությունը։

Երկրորդ գործը՝ Բ. Քուշնարյանի մեծածավալ և հիմնաքարային ուսումնասիրության քարգնամությունն է<sup>5</sup>։ Մոնոդիկ մշակույթը ուսումնասիրող երաժիշտների համար այն դարձել է սեղանի

<sup>4</sup> «Քրիստավոր Քուշնարյան» (հոդվածներ և ուսումնասիրություններ, կարծիքներ, հուշեր). Կազմողներ՝ Մ. Հ. Մուրադյան, Ն. Ի. Քուշնարյան, Մ. Ա. Բրուսյան։ Մասնագիտական խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Մ. Ա. Բրուսյան (անտիպ)։

<sup>5</sup> Х. С. Кутшварев "Вопросы истории и теории армянской монодической музыки", Ленинград, 1958.

գիրք: Աշխատությունը համարելով նոր վույ հայ երաժշտագիտական տեսական մաքի գարգացման մեջ, հայկական միջավայրում ավելի լայն գիտական շրջանառության մեջ դնելու խիստ անհրաժեշտության գիտակցումով Մ. Բրուսյանը մասնագիտական խորությամբ թարգմանեց այն: Աշխատությունը սպասում է իր հրատարակողին:

Մինչ այդ, Մ. Բրուսյանն արդեն ավրապետում էր մասնագիտական գրականության բնագրից բարգմանելու դժվարին արվեստի գաղտնիքներին: Երկար տարիներ դասավանդելով հարմոնիա, նա խիստ անհրաժեշտ համարեց մոսկովյան խմբի հայտնի դասագիրքի<sup>6</sup> թարգմանությունը: Այն ունեցավ երկու հրատարակություն և, այսօր էլ հաջողությամբ կիրառվում է երաժշտական ուսումնական հաստատություններում: Ի դեպ, այս թարգմանությամբ Երևանի կոնսերվատորիայում հարմոնիայի դասավանդումը հավասարվեց խորհրդային միության լավագույն կոնսերվատորիաներում հարմոնիայի դասավանդման մեթոդական և գիտական բարձր մակարդակին:

Թարգմանական գործունեության ընթացքում գիտնական Բրուսյանի ուշադրության կենտրոնում մշտապես եղել են հայ երաժշտական տեսության տերմինաբանական հարցերը: Դրանց լուծման մի մեծ բաժինն իրականացվեց նրա իսկ թարգմանական աշխատանքների ընթացքում:

1955 թ. Մ.Բրուսյանը պաշտպանեց իր թեկնածուական թեզը՝ մվիրված հայկական ժողովրդական (գեղջուկ) երգի կոմպոզիցիոն առանձնահատկություններին<sup>7</sup>: Այս առիթով ահա թե ինչ է

<sup>6</sup> И.Дубовский, С.Евсеев, И.Способин, В.Соколов "Учебник гармонии", Москва, 1956: Նույնը՝ հայերեն, Երևան, 1966, 1978:

<sup>7</sup> «Հայկական ժողովրդական (գեղջուկ) երգի կոմպոզիցիոն առանձնահատկությունները» հայերեն, 332 էջ: Առնեալատության սեղմագիրք՝ շտաբերեն, 1955, Երևան:

գրում նա իր հուշերում. «Անասելի երջանիկ էի... Նրա (Քուշ-նարյանի - Ա. Կ.) խորհրդով ու օգնությամբ կյանքի ուղի բռնած մարդկանց շարքը ինձնով չէր սկսվում և ինձնով էլ չվերջացավ: Երբ ես պաշտպանեցի դիսերտացիաս, նա ինձ ասաց. Ես հիմա հանգիստ եմ, հանձին Ռորերտ Աբայանի, Գայանե Չերոտարյանի և Չեզ (Մ. Բրուտյան- Ա. Կ.) Հայաստանում ունեմ իմ դպրոցը. դա խիստ անհրաժեշտ է, որովհետև ժառանգականությունը «ճեղքեր չի սիրում»: Ի դեպ, Քուշնարյանը դպրոց ասելիս նկատի ուներ պոլիֆոնիայի և երաժշտական ֆուլկորի բնագավառները և ձգտում էր հայ երաժշտական ֆուլկորի մոնոդիկ էություն և պոլիֆոնիայի միջև իրավացիորեն աեսնել երաժշտական կորիզոնական մտածողության ընդհանրությամբ պայմանավորված հիմնավոր կապ»<sup>8</sup>:

Պրպտուն արվեստագետի գործունեությունը ի սկզբանե ընթացել է մի քանի ուղղություններով՝ գիաական, մանկավարժական, երաժշտահասարակական-կազմակերպչական և այլն, զուգահեռաբար լրացնելով ու մեկը մյուսով պայմանավորելով:

Որպես մանկավարժ Մ. Բրուտյանն իր գործունեությունը սկըսեց դեռևս Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում սովորելու տարիներից (1938-50 թթ.՝ տեսական առարկաների դասատու, ապա՝ բաժնի վարիչ):

1946-ից մինչև օրս նա դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Սկզբում վարում էր երաժշտական տեսական առարկաներ (հարմոնիա, պոլիֆոնիա): Դիսերտացիայի պաշտպանությունից հետո քեզը եիմք ծառայեց «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասընթացի ստեղծման համար, որը մինչև օրս, գործնական աշխատանք-

<sup>8</sup> Մ.Բրուտյան. Իմ ուսուցիչը և հոգևոր հայրը (հուշեր, տես՝ «Քրիստափոր Քուշնարյան» ժողովածուն, անտիպ):.

ներով հարստացած, դասավանդվում է հեղինակի և իր սաների կողմից: Մ.Բրուսյանը որպես հայ երաժշտական ֆոլկլորագիտության բնագավառի առաջատար մասնագետ, բեկումնային դեր խաղաց ժողովրդական երաժշտական ստեղծագործության խորը ուսումնասիրության ճանապարհին, այն դնելով համակարգված ուսումնական ընթացքի վրա: Իր տեսակի մեջ այս եզակի դասընթացով, գիտնական ու մանկավարժ Բրուսյանը հիմնեց ազգային դպրոց, որի գոյությունը առաջին անհրաժեշտություն էր Կոմիտասի անունը կրող կոնսերվատորիայի ուսումնական ծրագրում:

1969 թ. Կոմիտասի ծննդյան 100-ամյա հորեկյանի օրերին, ազգային մշակույթի հոգսերով ու ճակատագրով արդեն «տառապող» երաժշտագետը, մեծ դժվարություններով, բայց համառորեն կոնսերվատորիայում ստեղծեց մի նոր «ազգային օջախ». կազմավորվեց ժողովրդական երաժշտական ստեղծագործության ԿԱԲԻՆԵՏ, որի հիմքով, 1988 թ. ձևավորվեց Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը: Առաջին վարիչը եղավ հենց իր կազմակերպիչ Մ. Բրուսյանը:

Ընդհանրապես Մ. Բրուսյանի կազմակերպչական փայլուն ունակությունները սաղմնավորվել են ղեռնա ֆիլիհարմոնիայի ակտիվ գործունեության տարիներին, երբ այստեղ նա հիմնադրեց առաջին երաժշտական լեկտորիտը: Հետագայում այդ ակտիվությունը կրկնապատկվեց, երբ նա ընտրվեց Հայաստանի կոմպոզիտորների միության ֆոլկլորային հանձնաժողովի նախագահ և ԽՍՀՄ կոմպոզիտորների միության ֆոլկլորային հանձնաժողովի բյուրոյի անդամ: Հայաստանի կոմպոզիտորների միության «Լրաբերը» ընդարձակ տեղեկատվություն է պարունակում այդ տարիներին Հայաստանում, միության տարբեր վայրերում, նաև

արտասահմանում հայ երաժշտական գիտաժողովների, երասարակումների, ժողովրդական երգարվեստի սարածման՝ ֆոլկլորային համերգների, փառատոների մասին<sup>9</sup>։ Արժե հիշել, որ նախկին միության հանրապետություններից առաջինը Հայաստանն էր, որտեղ 1973 թ. կայացավ ժողովրդական երաժշտությանը նվիրված Հայաստանի կոմպոզիտորների միության առաջին համագումարը, որի փայլուն կազմակերպիչն ու զեղարվեստական ղեկավարը Մ. Բրուտյանն էր։ Երկրորդ համագումարը տեղի ունեցավ 1987-ին։

Այնուհետև, Մ. Բրուտյանի գործուն մասնակցությամբ, այդ բնագավառի առաջատար գիտնական-ֆոլկլորագետ Վ. Լ. Հոշովսկու և Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ալգորիթմիկ լեզուների և ծրագրավորման ամբիոնի հետ համատեղ ձեռնարկվեց ֆոլկլորագիտության բնագավառում ԷՀՄ-ի ներդրման արժեքավոր և առաջին փորձերից մեկը՝ հայ երգի մեքենայացված բարտարանի ստեղծումը, որը շարունակվում է նաև այսօր։ Այդ աշխատանքների բարձրակետը եղավ կոմսերվատորիայի բարտարանային խմբի մասնակցությունը 1975 թ. Դիլիջանում կայացած միջազգային գիտաժողովին, որն ավարտվեց կոնկրետ փորձարկումով՝ Պոլիտեխնիկական ինստիտուտում (այն իրականացվեց մաթեմատիկոս-ծրագրավորող Է. Գասպարյանի ջանքերով)<sup>10</sup>։

Այս ամենով հանդերձ, Մ. Բրուտյանի կազմակերպչական ունակությունների փայլուն դրսևորումը պետք է համարել հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կարհնատի հիմնադրումը։ Այն դարձավ հայ ժողովրդական երգ-երաժշտությունը

---

<sup>9</sup> ВЕСТНИК Союза композиторов Армении, 1975-1985 ԻԴ

<sup>10</sup> «Երաժշտական տեսության ալգորիթմական ֆորմալիզացված վերլուծություն». սեմինարի նյութեր (Երևան-Դիլիջան 27.10-1.11. 1975 թ.): ՀԳԱ հրատ., Երևան, 1977:

հավաքող, ուսումնասիրող, տարածող, նրա հիմնախնդիրներով գրադվող և երիտասարդ կրթաշտազետներին ազգային ոգով դաստիարակելու կարևոր օջախ:

Կարիներատում պահվող տպավորությունների գրքում հայանի երաժշտագետ Ե. Վ. Նազայկինսկին գրում է. «Կարիներտը իր ղեկավարով և աշխատակազմով մի հիանալի կոլեկտիվ է՝ իր առաջադեմ կրթաշտազետի մոտեցմամբ հայ կրթաշտազետի մշակույթի այն զարմանալի զանձերի ուսումնասիրությանը, որոնցում արտացոլվում է հայ ժողովրդի պատմության, կյանքի, սովորույթների, աշխարհագրական անդաշտների ողջ բազմազանությունը, նրա գեղեցիկ և հարուստ բնությունն ու մարդկային հոգին, և այն անորսալին, որով կարելի է զարմանալ, հիանալ, և որը անհրաժեշտ է հոգածությանը պահպանել»:

Կարիներտի ստեղծումը նշանավորվեց իր առաջին ուսանողական գիտական արշավով դեպի Թբիլիսի շրջան, որի նպատակն էր հավաքել կորստյան մատնված ավանդական կրթն ու նվազը: Առաջին արշավի հավաքած նյութերը հետագայում կազմեցին «Թբիլիսի» ձայնագրյալ ժողովածուի բովանդակությունը<sup>11</sup>:

Անակավարժ Բրուտյանի համար Կարիներտի ստեղծումը հետապնդում էր նախ և առաջ մի գլխավոր նպատակ՝ նպաստել ազգային ոգու դաստիարակությանը, հայեցի զգացողությանը: Շուրջ բառորդ դար անընդմեջ ղեկավարելով Կարիներտի բազմարևոյթ աշխատանքներն ու ուսումնական գործընթացը, հետագայում նաև ամբիոնի վարիչի և գիտական ղեկավարի պարտականությունների շրջանակներում, Մ. Բրուտյանն ընդլայնեց ամբիոնի թե՛ կազմը, թե՛ դասավանդվող առարկաների ցանկը, ուսա-

<sup>11</sup> «Թբիլիսի» («Հայկական ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշար, հատ. 1): Կազմողներ՝ Ա. Սահակյան, Ա. Փահլևանյան, խմբագիր՝ Մ. Բրուտյան: Երևան, 1984:

նողներին տալով համալիր ազգային կրթություն ստանալու հսկայական հնարավորություններ: Ի՞նչ անձնական գրադարանի նվիրատվությամբ նա ստեղծեց կաբինետի՝ ֆոլկլորագիտությանը վերաբերող հարուստ և եզակի գրադարանը: Շարունակվեցին ժողովրդական երգերի հավաքման գիտաբազաների կազմակերպումը Հայաստանի սարբեր շրջաններում, նրա սահմաններից դուրս հայաշատ վայրերում, նույնիսկ՝ սփյուռքում: Կաբինետի ձայնադարան-արխիվում պահվում է շուրջ 13.000 նմուշ, որոնց մեծ մասը գրառվել է Մ. Բրուսյանի ղեկավարած գիտաբազաների ընթացքում<sup>12</sup>:

Հանրապետությունում երաժշտական ֆոլկլորի գիտական կենտրոնի (ինստիտուտի) բացակայության պայմաններում, կաբինետի բազմապլան աշխատանքների իրականացումը էլ ավելի է կարևորվում՝ ժողովրդական ազգային ավանդույթների պահպանման և ճանաչողության իմաստով:

Այսպես շարունակվում էր Կոմիտասի, նրա ժամանակակիցների ու հետնորդների և հենց իր պապիկի կիսատ բողած ազգանվեր գործը, որին մասնակից էին նաև մեծ թվով ուսանողներ: Հետագայում այդ ուսանողներից շատերը ավարտեցին Մ. Բրուսյանի մասնագիտական դասարանը իբրև ֆոլկլորագետներ և հաջողությամբ շարունակում են գործել իրենց սիրելի ուսուցչի ծավալուն գործունեության այս կամ այն ոլորտում: Ի դեպ, նրա բազմազգ դասարանում գրած դիպլոմային աշխատանքների թեմատիկ ընդգրկումը նույնքան բազմազան է, որքան և իրենց գիտական ղեկավարի՝ ֆոլկլորի հանդեպ ունեցած հետաքրքրությունների շրջանակը<sup>13</sup>: Սա մի առանձին գիտական բնագավառ

<sup>12</sup> Մ. Բրուսյանի ղեկավարությամբ գիտաբազաների ցանկը տես թիվ 4 հավելվածում:

<sup>13</sup> Մ. Բրուսյանի մասնագիտական դասարանի սաների և նրանց դիպլոմային աշխատանքների ցանկը տես թիվ 3 հավելվածում:

Է, որտեղ ուսանողների ուժերով վեր են հանվում հայ ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտության մտացված էջեր, մշակույթի նվիրյալ անուններ: Այդ աշխատանքներից շատերը առ այսօր միակ խոսքն են այն արվեստագետների մասին, որոնց վաստակը անուրանալի է հայ արվեստի պատմության մեջ:


Կոմսերվատորիայի ուսումնական ծրագրում<sup>14</sup> „Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն,, դասընթացը հաջողությամբ անցնելով տարիների փորձության միջով բերեց նույնանուն դասագրքի ստեղծմանը: «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասագիրքն իր բովանդակությամբ, ծավալով ու մասնագիտական կշռով իր նախադեպը չունի հայ երաժշտական ուսումնական գրականության մեջ: Հրատարակվել է երկու անգամ, բայց պահանջարկ կա նոր հրատարակության<sup>15</sup>:

Ահա դասագրքի հրատարակության առթիվ բազմաթիվ արձագանքներից մեկը՝ «Կոմիտաս Վարդապետը և հայ երգը» գրքի հեղինակ, երգիչ Հակոբ Ասատուրյանի (Նյու-Յորք) կարծիքը. «Գիրքը կարդացի ոչ միայն հաճությամբ, ոչ միայն հոգեկան բավարարվածությամբ, այլ և հավիտենապես ուշացած ճամփորդի իմ հանգամանքովս առիթ ունեցա նույնիսկ շատ բան սովորելու: Առիթ ունեցա նաև... մեղավորապես նախանձելու ներկա սերունդին, որ դպրոցական սեղաններեն սկսած պիտի ունենա իր ձեռքին այսպիսի փավերագրական գիրք և առաջնորդություն՝ իր ապագա երաժշտական քայլերուն սատարող: Երանի թե գիտնազայն լավագույն կերպով գործածել և օգտվել անկե: Որովհետև

<sup>14</sup> Դասընթացի ծրագիրը հրատարակվել է ավելի ուշ՝ 1989 թ-ին:

<sup>15</sup> Մ. Բրուտյան. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն. Գեղեկական երգ, մաս 1: Երևան, 1971: Երկրորդ լրացված հրատարակությունը՝ 1983 թ.:

A I  
20054



շատ ճիշտ է ներածականի մեջ երևացող այն հետևությունը, թե մայրենի լեզվի և ազգային երգի պահպանումը ազգի գոյության և հարատևման հիմքն է <sup>16</sup>»:

«Հռչակապ դասագիրք» պիտակով այն լայն շրջանառության մեջ մտավ: Ահա թե ինչպես է այն արժեքավորում երաժշտագետ Ռ.Ստեփանյանը՝ դասագրքի հրատարակման առիթով գրված իր գրախոսականում. «Որո՞նք են դասագրքի արժանիքները: Ամենից առաջ՝ հետազոտվող երևույթների ընդգրկման համակողմանիությունը, նյութի դասավորման տրամաբանվածությունը, տեսական ձևակերպումների հստակությունը, ամբողջի ստույգ կառուցվածքը <sup>17</sup>»:

Դասագիրքն ունի երկու հիմնական բաժին: Առաջինում դիտարկվում են հայ գեղջկական երգի լադերը, լադախնտոնացիոն առանձնահատկությունները, մետրառիթմը: Այստեղ «ի հայտ են բերված հայ երաժշտության մեջ լադերի դրսևորման ընդհանուր օրինաչափությունները՝ նրանց հնչյունաչափ կառուցման և ինտերվալիկայի առանձնահատկությունների, լադային ավտերացիաների, երանգավորման ու մոդուլյացիայի առումով: Բնութագրվում են մեղեդու ծավալման օրինաչափությունները, այդ ընթացքում ծագող շարժման ձևերը և ուրիշ հարցեր, որ իրենց ամբողջությամբ մեծ դեր են խաղում երգի դինամիկայի ու նրա կառուցվածքի կազմակերպման մեջ <sup>18</sup>»:

Բրուսյանը երաժշտագիտության ժամանակակից տեսությամբ յուրովի է լուծել տերմինաբանական կարևոր հարց՝ հայ գեղջուկ

<sup>16</sup> Հակոբ Ասատուրյան. Հորովելներ: «Մովետական Արվեստ» 1969, N10, էջ22-28:

<sup>17</sup> Ռ. Ստեփանյան. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն: Գրախոսական Մ. Բրուսյանի համանուն դասագրքի հրատարակության առթիվ: «Մովետական Արվեստ», 1974, N 10, էջ 57-58:

<sup>18</sup> Նույն տեղում:

երգի լադերի անվանումները ազատել է եփառ նախադրի պարտադիր կցորդումից: Մեծ կարևորություն է տրված, առանձին բաժնով ներկայացված անհեմիտոն լադերի տիպականությունը հայ ժողովրդական երաժշտությանը: Ճշտված են նաև երգերի գրառման տոնայնությունները (բարձրությունը), որը խիստ կարևոր է երգի բնույթի և տեմբրի փոխկապվածության տեսանկյունից:

Բնութագրվող դասագրքի երկրորդ բաժինը, որն ընդգրկում է հայ ժողովրդական գեղջուկ երգի ժանրերն ու քեմառիկան, արժեքավոր է, հատկապես, ժանրային հստակ մշակված դասակարգմամբ: Այդ մասին գրում է նաև Ռ. Ստեփանյանը. «Այստեղ առավել զնահատելին հայկական ժողովրդական երգի պատմաճանաչողական արժեքի բացահայտումն է և նրա դաստիարակման ճշգրտումը՝ երգերի բովանդակության բանաստեղծական ու երաժշտական կողմերի միասնության հիման վրա»<sup>19</sup>: Բարձր գնահատելով դասագիրքը, նա նաև ավելացնում է, որ «Շատ-շատերի համար այն անզնահատելի հենարան է, ելակետ, որից մեկնելով յուրաքանչյուրն այնուհետև կարող է ինքնուրույն մշակել իր վերաբերմունքը ժողովրդական երաժշտական ստեղծագործության հանդեպ, յուրովի օգտվել նրա սքանչելի մմուշների մեջ եղած հարստություններից»<sup>20</sup>:

Աշխատությունը մտահղացված էր իբրև երկհատորյակ: Երկրորդ հատորում նախատեսվում էր ընդգրկել գուսանա-աշուղական արվեստի, քաղաքային ֆոլկլորի և ժողովրդական նվագարանային կատարողական արվեստի մասին տեսական դասընթացը, որում դիտարկվող հարցերը ոչ պակաս հետաքրքրական են ու նշանակալի: Ցավոք, այս մտահղացման միայն մեկ ուրրոր

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

հասցվեց ավարտին: Խոսքը «Քաղաքային ժողովրդական երաժշտական կատարողական արվեստի պատմության էջեր» ուսումնասիրություն ձեռնարկի մասին է: Այն գրված է «սեփական ժողովրդի կյանքի ու մշակույթի հեռու ու մոտիկ անցյալի, մաս այսօրվա նմուշները հավաքելու, գրառելու, վերականգնելու և սերունդներին փոխանցելու խորին գիտակցումով, որը կնշանակի ազգապահպանություն, հարատևություն, ազգային դիմանկարի պահպանում, այսինքն՝ ազգը բնորոշող բարձր կուլտուրա»<sup>21</sup>:

Քաղաքային երաժշտության ճյուղերից հեղինակն անդրադառնում է սազանդարային և աշտոական երաժշտությանը, մուղամափն և ընդհանրապես գործիքային երաժշտությանը<sup>22</sup>:

Ուսումնասիրության մեջ առաջ են քաշված պորթլեմներ, որոնք առկա են ընդհանրապես ժողովրդական երաժշտական արվեստի բնագավառում: Այսպես օրինակ, ո՞րն է ժողովրդական երաժշտությունը, նրա ազգային որոշակիությունն ու պատկանելիությունը, ազգայինի ու համամարդկայինի փոխհարաբերությունը, ժողովրդական երաժշտության զարգացման ուղիների «ընտրության» կամ Արևելքի ու Արևմուտքի սինթեզման նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը, տարբեր ժողովուրդների հետ մոտիկ հարևանության փաստը և այլն: Եթե պորթլեմը հետաքրքրել է գիտնականին, ապա այն խորացվել ու յուրավի է մեկնաբանվել: Աշխատության հիմնական մասը ուսումնասիրում է հայ քաղաքային միջավայրում արմատացած նվագարանային

---

<sup>21</sup> Մ.Էրուտյան. Քաղաքային ժողովրդական երաժշտական կատարողական արվեստի պատմության էջեր: Անտիպ, 140 մեքենագիր էջ:

<sup>22</sup> Երգային արվեստը դուրս է տեսադաշտից, քանի որ այն հիմնովին ուսումնասիրված է երաժշտագետ Ա.Սարյանի կողմից (տես՝ Ա.Սարյան-Հարությունյան. Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը, 19-20-րդ դարեր: «Հայ ազգագրություն և բանահյուսություն» հատոր 4, Երևան, 1973):

կատարողական ուղղությունները և այդ մշակույթի պատմական զարգացման ընթացքը 18-րդ դարից մինչև 20-րդ դարի երկյուրդ կեսը ընդգրկող ժամանակաշրջանում: Աշխատությունն ավարտվում է գեղարվեստական ինքնագործունեությանը նվիրված ակնարկով, որտեղ տեսակավորված են Հայաստանում գործող երաժշտական կոլեկտիվները՝ գեղարվեստական ինքնագործունեության անվան տակ: Երևույթն ընդհանուր առմամբ համարելով խորհրդային . գաղափարախոսության արդյունք, հեղինակն, այնուամենայնիվ, նշում է ինքնագործունեության մեծ դերը ժողովրդի կյանքում՝ իբրև ազգային երաժշտական ժառանգությունը սերունդներին փոխանցելու ձևերից մեկը:

Այս և բազում այլ հիմնախնդիրներ են շոշափված նաև Բրուսայանի գիտական և հրապարակախոսական հոդվածներում, որտեղ հստակեցված է գիտնականի վերաբերմունքը ազգային մշակույթի բազում խնդիրների շուրջ:

Երաժշտագետն իր առավել հետաքրքիր և լուրջ պոռթկմաներ արձարձող հոդվածները ընդգրկել է միավորել է մեկ ժողովածուի մեջ ու տեսակավորել բաժիններով՝ տեսություն, գրախոսություն, ելույթներ գիտաժողովներում, հրապարակախոսություն և ստեղծագործական դիմանկարներ:

Բրուսայան երաժշտագետն իր՝ տեսաբանի վերլուծական մտածողության գերակշռությամբ, հոդվածներում առաջ է քաշում առավելապես տեսական հիմնախնդիրներ: Մեր օրերում նա եզակի երաժշտագետներից է, որ անդրադարձել է նաև հայ իրականության մեջ մուղամաթի գոյության և կենցաղավարման, դրա տեղային ծագման վիճելի հարցերին: Ուշադրության է արժանի ուս երաժշտագետ Ե.Գիպիուսի կարծիքը. «Ուշագրավ է, որ Մ. Բրուսայանը մուղամի հայկական ձևերը դիտում է բոլորովին այլ

լույսի ներքո՝ իբրև տեղական երևույթ և գեներալի կապի մեջ՝ գեղջուկ ավանդական երգերի ռեչիտատիվ-իմպրովիզացիոն ձևերի հետ»:

Մ. Բրուսյանի գիտական հոդվածների շարքում ընդգրկված են լուրջ գրախոսականներ այնպիսի հեղինակավոր երաժշտագետների հրապարակումների կապակցությամբ, որպիսիք են Զ. Քաշնարյանի «ВОПРОСЫ...», Ռ. Աթայանի «Հայկական խազային նոտագրություն», Մ. Թոմասնանի «Հայրենի երգ ու բան» (հատոր 1), Հ. Ասատրյանի «Կոմիտաս Վարդապետի հետ» աշխատությունները, Ժ. Չուրաբյանի, Լ. Հակոբյանի քեկնածուական ատենախոսությունները և այլն:

Իր հրապարակախոսական հոդվածներում Մ. Բրուսյանը բարձրացրել է ժողովրդական երգերի շուտափույթ հավաքման անհրաժեշտության հարցը, որը հետագայում (կարփնեստի ստեղծման օրից) ինքը իրականացրեց կազմակերպած բազմաթիվ գիտարշավների շնորհիվ: Սակայն եղածը նա համարում է քիչ, այն համեմատելով այլ համրապետություններում հավաքվող նյութի հսկայական քանակի հետ, ինչպես նաև առաջ քաշում դրանք պահելու անհրաժեշտ պայմանների ստեղծման ու ձայնագրման որակյալ տեխնիկայի ձևերի մասն խնդիրները: Խիստ մտահոգության նյութ է նաև ժողովրդական երգերի և նվագների հազվադեպ հրատարակումները, այն դեպքում, երբ նախկին եղբայրական հանրապետություններից շատերում դրանք բազմաքանակությամբ կանգնում էին հրատարակվում (հասկապես Ադրբեյջանում):

Երաժշտագետը մտահոգ է ոչ միայն ժողովրդական երգի, այլև ազգային պարի ճակատագրով: Նա միանգամայն կողմ է այն ամեն նորին, որին հասնելու համար ճշմարիտ ուղին տեսնում է Լյանքին համընթաց զարգացող, բայց և ազգային արմատներից ամուր կառչած մշակույթի գոյությանը՝ բարձր պրոֆեսիոնալիզմի

և գեղարվեստական հատկանիշների համադրմամբ:

Նախքան կոմսերվատորիայում ժողովրդական սանդղագործության Կաբինետի ստեղծումը, Բրուսյան ֆուլկորագետի համար խիստ մտահոգություն էր ֆուլկորի և ժողովրդական կատարողական ամբիոնների բացակայությունը: Նա գիտակցում էր, որ կադրերի պակասը կասեցնում է գիտական մտքի և կատարողական արվեստի զարգացումը<sup>23</sup>:

Սանդղագործական դիմանկարներ շարքում Մ .Բրուսյանը ընտրել է մեծ վաստակ ունեցող մարդկանց, աշխատել է վեր հանել պատմության մոռացված էջեր ու անուններ, որոնց շնորհիվ շարունակական զարգացում է ապրել հայ մշակույթը:

Այդ նվիրական անունների շարքում են Կոմիտասը, Արշակ Բրուսյանը, Ստեփան Դեմուրյանը, Վարդգես Տայյանը, Զրիստափոր Բուշնարյանը, Թաթուլ Ալթունյանը, Սամսոն Գաապարյանը, Դանիել Ղազարյանը, Միքայել Միրզայանը, Թամար Շահնազարյանը, Էդուարդ Միրզոյանը, Հովհաննես Չեքիջյանը, Հակոբ Ասատուրյանը և ուրիշներ, որոնցից մի քանիսը հետագայում արժանացան իրենց վաստակի խորին գնահատանքին. նրանց նվիրվեցին մենագրություններ, որոնցից առաջին երեքը գրվել են 1962 (Թ. Ալթունյան), 1969 (Ս. Դեմուրյան) և 1978 (Վ. Տայյան) թվականներին, վերջինը՝ քսան տարի անց՝ 1998-99-ին (Հ. Ասատուրյան):

Մենագրությունները խիստ արժեքավոր են նրանով, որ առաջին և քերես միակ բովանդակ ու ամփոփ աշխատություններն են՝

<sup>23</sup> Ի դեպ, Մ.Բրուսյանի մասնագիտական խորհրդով ու անմիջական աջակցությամբ (յլքրև դեկան) կոմսերվատորիայի ժողովրդական նվագարանների ամբիոնում 1979 թ. ստեղծվեց «Հայ երգեցողության» դասարան (հիմնադիր-ղեկավար՝ կոմպոզիտոր, երգիչ Արգաս Ոսկանյան):

նվիրված հայ արվեստի գործիչների կյանքին և բեղուն գործունեությանը:

Թ. Ալթունյանը ներկայացված է իբրև հայ ժողովրդական երգի, պարի նուրբ գիտակ և անխառն տարածող, իր անունը կրող ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլի հիմնադիր-ղեկավար, խմբավար և հմուտ մանկավարժ<sup>24</sup>:

Սու. Դեմուրյանը ներկայացված է իբրև բնագավառի լուսավորիչ՝ իր ժամանակի խավարամիտ միջավայրում և երաժշտահասարակական բազմաբովանդակ գործունեություն ծավալած նվիրյալ անձ<sup>25</sup>:

Վ. Տալանն, իրավամբ, ներկայացված է իբրև կոմպոզիտորական մանկավարժական նոր դպրոցի հիմնադիր և փայլուն կոմպոզիտորական սերունդ կրթած բազմավաստակ մանկավարժ<sup>26</sup>:

Իսկ Հ.Ասատուրյանը ներկայացված է իբրև հայ երգի կրող-պահպանող սփյուռքում: Մի վայր, որտեղ և՛ հայ մարդը, և՛, առավել ևս, երգն ու երաժշտությունն ենթակա են կորսության: Բրուտյանը զնահատում է մի մտավորականի, որի դերն իրապես մեծ է հայապահպանության գործում՝ թե՛ որպես գրող, թե՛ երգիչ, թե՛ երաժշտահասարակական գործիչ<sup>27</sup>:

Մ.Բրուտյանի խոսքերով՝ «Նրանց գործունեությունը մենագրությամբ ներկայացնելը հոգու պարտք էր», որը հեղինակն իրականացրեց հավուր պատշաճի՝ մասնագիտական խորությամբ, գիտական բարեխղճությամբ, բայց և արտահայտման անմիջականությամբ, անկեղծությամբ ու ջերմությամբ:

<sup>24</sup> Մ. Բրուտյան.: Թաթուլ Ալթունյան: Երևան, 1962:

<sup>25</sup> Մ. Բրուտյան. Ստեփան Դեմուրյան: Երևան, 1969:

<sup>26</sup> Մ. Բրուտյան. Վարդգես Տալան: Երևան, 1978:

<sup>27</sup> Մ. Բրուտյան. Հակոբ Ասատուրյան - սփյուռքահայ գրողն ու երաժիշտը: Երևան, 1999:

Հոգու պարաթ Լ.ր նաև իր պապիկի՝ Արշակ Բրուսյանի հավաքած երգերի հրատարակումը, որոնք շուրջ մեկ դար մնացել էին նրա արխիվում: 19-րդ դարի վերջում չորս հրատարակություն տևած «Ռամկական մրմունջներ» երգարանի բնագրերը 100 տարի անց միայն հնարավորություն ունեցան ձուլվելու իրենց մեղեդիներին և դարձյալ «Ռամկական մրմունջներ» խորագրով, արդեն որպես ձայնագրյալ ժողովածու հրատարակվեց արվեստագետ թոռնուհու ջանքերով<sup>28</sup>: Ժողովածուի հրատարակումը նշանակալի երևույթ էր ժողովրդական կրթչառական մշակույթի պատմության մեջ, որովհետև նյութը խիստ արժեքավոր է իր վաղնմության, անադարտության և ժողովրդական երգարվեստի բոլոր ճյուղերի ընդգրկման առումներով: Այս հրատարակությունը, սակայն, պապիկի հավաքածուի մի մասն է, որը պարունակում է գեղջուկ երգեր ու պարեղանակներ: Աշտղական և հայրենասիրական երգերը կազմելու են երկրորդ հատորը, որն իր նախորդի պես կունենա զիտական, ճանաչողական մեծ արժեք: Այն նույնպես սպասում է իր հրատարակողին:

Անմնացորդ նվիրումով ստեղծվեց նաև հաջորդ երկվեզվյան ժողովածուն, որը կրում է «Հայրենական մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» խորագիրը<sup>29</sup>: Ժողովածուն նվիրված էր ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 40-ամյակին, որը, սակայն, հրատարակչական դժվարությունների հետևանքով լույս տուսավ միայն հաղթանակի 50-ամյա տարելիցի օրերին:

---

<sup>28</sup> Արշակ Բրուսյան. Ռամկական մրմունջներ. ձայնագրյալ ժողովածու. մաս 1: Երևան, 1986:

<sup>29</sup> Հայրենական Մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում (կազմողներ-խմբագիրներ՝ պրոֆ. Մ.Բրուսյան և պրոֆ. Ա.Փահլևանյան: Տեքստերի ռուսերեն քարգմանությունը՝ Ա.Փահլևանյանի): Երևան, 1995:

Գրվատանքի արժանի վիթխարի գործ են կատարել ժողովա-  
ծուի հեղինակները (Մ.Բրուտյան, Ա.Փանկևանյան), որոնք հա-  
վաքել, կազմել, նոտագրել, ծանոթագրել են ժողովածուն: Այստեղ  
տեղ են գտել 70 երգ, որոնց հեղինակներն են հայտնի աշուղներ,  
անհայտ զինվորներ և թիկունքում մնացած նրանց հարազատ-  
ները: Երգերը դասակարգված են ոստ դրանց բովանդակության՝  
«Պատերազմ է», «Հրաժեշտ», «Մարտի դաշտում», «Լաց ու ա-  
նևծր», «Հաղթանակ և ցնծություն», «Ձոն հերոսներին» և «Խաղա-  
ղություն»: Ժողովածուում զետեղված են ձոներգեր՝ նվիրված Թա-  
մանյան դիվիզիային, Հովհաննես Բաղրամյանին, Նվեր Մախար-  
յանին, Նելսոն Ստեփանյանին: Իբրև նկարագրողումներ օգտա-  
գործված են ինքնուս նկարիչների սպտերազմական թեմաներով  
գործերը:

Ժողովածուն ներկայացնում է «Հայ ժողովրդի ընկալումներն ու  
վերաբերմունքը Հայրենական մեծ պատերազմի նկատմամբ:  
Ժողովրդական երգասացներից և գուսաններից գրառած երգերը  
մեր ժողովրդի կյանքի օրհասական պահերից մեկի պատմական  
գեղարվեստական վավերացումներն են: Այդ իմաստով ժողովա-  
ծուի նյութերն ունեն նաև պատմագիտական արժեք»<sup>30</sup>:

Ժողովածուի հրատարակման առթիվ տպված գրախոսական-  
ներից մեկի հեղինակն իրավացիորեն նշում է, որ «Հիշատակված  
պատերազմի վերաբերյալ ստեղծված ծովածավալ գրականու-  
թյան մեջ այս ժողովածուն՝ հրատարակված Հայաստանի կառա-  
վարության որոշմամբ, ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամ-  
յակի առթիվ, եզակի երևույթ է իր դարակազմիկ ու մնայուն  
նշանակությամբ. այն չխամրող ծաղկեփունջ է պատերազմի գո-

<sup>30</sup> Նույն տեղում:

հերի հիշատակին, հարգանքի տուրք դնուս ապրող պատերազմի մասնակիցների պատվին»<sup>31</sup>:

Հետաքրքրական և խիստ արժեքավոր աշխատություն է «Հայ մոնոդիկ երաժշտություն» մատենագիտությունը (համահեղինակ՝ Հ.Էլոյան), որի հիմքում ընկած է Մ.Բրուսյանի կազմած «Հայ ժողովրդական երաժշտության մատենագիտությունը» հայերեն և ռուսերեն լեզուներով (1973 թ.): Այն ամբողջական և հարուստ տեղեկատվություն է պարունակում հայ ժողովրդական երաժշտական արվեստի մասին<sup>32</sup>:

Ըստ երևութիւն, «Մատենագիտության» շնորհիվ միտք հղացավ ստեղծելու մահ հայ ժողովրդական երգարվեստի նմուշների՝ ձայնապնակների տեսքով ձայնագրությունների մատենագրության, որը Մ.Բրուսյանի ներածականով ու խմբագրմամբ, իրականացրին նրա սաներից երաժշտագետներ Ա.Կիրակոսյանը, Հ. Ափինյանը և Գ.Ա Արվեստի ինստիտուտի գիտաշխատող Ժ.Բաղայանը<sup>33</sup>:

Բացի այդ, Մ. Բրուսյանը տարիների ընթացքում նպաստել է մահ ավանդական երաժշտությանը վերաբերող հետաքրքրական ձայնապնակների ստեղծմանը: Դրանք, իբրև հնչող նյութ, մեծ

---

<sup>31</sup> Հ. Հովհաննիսյան. Անճնացողը նվիրումով: Հայաստանի Հանրապետություն, 7.09.1995:

<sup>32</sup> Հայ մոնոդիկ երաժշտություն (մատենագիտություն, 1794-1991 թթ.) Կազմողներ՝ Մ. Բրուսյան, Հ. Էլոյան: Երևան, 1991:

<sup>33</sup> "Дискография армянской монодической музыки". Записи 1912-89гг.: Составители: А. Апинян, Ж. Бадалян, А. Киракосян. См. Сборник научных трудов "Традиционный фольклор и современные народные хоры и ансамбли". Ленинград, 1989. стр. 175-246.

արժեք են ներկայացնում՝ պատկերացում տալով ժողովրդական կատարողական արվեստի մասին <sup>34</sup>:

1982 թ. Մ. Բրուտյանը արժանացավ պրոֆեսորի գիտական կոչման: ԽՍՀՄ Բարձրագույն Որակավորման հանձնաժողովին ներկայացրած նրա բազմաքանակ աշխատությունների <sup>35</sup> հետ կցված էին երաշխավորագրեր՝ տրված հայտնի երաժիշտներ Տ. Խրեննիկովի, Ե. Գլխիուսի, Ա. Ռուդնևայի, Գ. Յիտովիչի, Լ. Մուխարիմսկայայի, Ջ. Մոժեյկոյի, Ռ. Գլեզերի և այլոց կողմից, որոնք իրավամբ բարձր են գնահատում վաստակաշատ գիտնականի ներդրումը հայ ֆոլկլորագիտության, մանկավարժության և երաժշտահասարակական գործունեության բնագավառներում:

